ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ РЕЦЕНЗИИ

PAUL Z. BEDOUKIAN, *Coinage of the Armenian kingdoms of Sophene and Commagene, the American Numismatic Society*. Museum Notes 28 (1983). pp. 71—87+2pl (№№ 11—12).

Դոկտոր Զարեհ Պտուկյանը հրատարակել է Սոփքի և Կոմմագենեի հայկական դրամներին վերաբերող իր հետազոտությունների արդյունքները։ Աշխատանքները կատարվել են եվրոպական և ամերիկյան թանգարաններում, ինչպես նաև առանձին հնասերների մոտ պահվող, հելլենիստական սյատկերագրությամբ դրամների հիման վրա։ Ներկայացված են հետևյալ հաստատությունների ու անհատների կողմից հավաքված, Սոփքի և Կոմմագենեի հայկական թագավորություններին պատկանող դրամները.

№	Հավաքածուներ	Դրամների ծագումը և քանակը (հատերով)	
		Սոփք	Կոմմագենե
1.	Ազգային Մատենադարան (Փարիզ)	11	4
2.	Ամերիկյան դրամագիտական ընկերություն (Նյու Յորք)	3	3
3.	Բրիտանական թանգարան (Լոնդոն)	9	3
4.	Գեվրիկյան ժողովածու (Նյու Յորք)	3	--
5.	Հունտերյան թանգարան (Գլազգո)	1	1
6.	Միխիթարյան թանգարան (Վիեննա)	5	—
7.	Պատմության թանգարան (Բեռլին)	6	1
8.	Զարեհ Պտուկյան ժողովածու (Նյու Յորք)	4	15
9.	Պետական էրմիտաժ (Լենինգրադ)	3	—
	Ընդամենը՝	55	27

Աշխատությունը բաղկացած է հետևյալ բաժիններից. ներածություն, Սոփքի ու Կոմմագենեի հայոց թագավորության պատմական ակնարկ, գահակալներից յուրաքանչյուրին վերաբերող ժամանակագրական տվյալներ, թողարկված դրամների դասակարգում, ինչպես նաև պատկերատախտակներ, որոնցով ներկայացված են №№ 1—27 դրամների երկկողմանի լուսանկարները բնական մեծությամբ։

Սոփքի հայոց դրամների թողարկումն սկսվել է Սամեսի դրամներով (մ. թ. ա. մոտ 260 թ.), ինչպես որոշել է հեղինակը։ Ելնելով հին Հայաստանի քաղաքական պատմության ժամանակագրությունից, Զ. Պտուկյանը բացահայտում է, որ մ. թ. ա. III դարում Կոմմագենեն եղել է Սոփքի թագավորության կազմում ու չէր կարող ունենալ իր առանձին դրամները, մի իրողություն, որ զանց է առնված դրամագիտության դասական երկերում։ Հետևաբար մ. թ. ա. III դարի կոմմագենյան կոչված դրամները փաստորեն Սոփքի հայոց թագավորության դրամներն են և ուրեմն հարկ է շտկել Վիկտոր Լանգլուայի, ինչպես նաև Լյուեստ Բաբելոնի՝ անցյալներում ընդունած դասակարգումը։ Արդարև, Զ. Պտուկյանի լուսաբանությունը գնահատելի է իբրև որոշակի ներդրում հին հայկական դրամների այդ խմբի դասակարգման գործում։ Սամեսը դրամների վրա պատկերված է վեղարաձև գլխարկով, հար և նման աքեմենյան սատրապների կրած գլխարկներին, ականջակալով ու վզկալով, իսկ հակառակին մասում ունի միապետի պսակ, որի ժապավենի ծայ-

Դրամների տարաբաժանումն ըստ գահակալների և նրանց խեակի (հատերով) ըստ հավաքածուների.

Գահակալները	ԴՐԱՄՆԵՐԸ								
	Աբգ. մատենադարան (Փարիզ)	Ամերիկյան դրամ. մագազ. ընկերություն (Նյու Յորք)	Ուրիշ քանդարան (Լոնդոն)	Գեկերիկյան (Նյու Յորք)	Տոնեկյան քանդարան (Դիյոնոն)	Միրիք. քանդարան (Լիոն)	Պատմ. քանդարան (Ընդերին)	Պուտուկյան (Նյու Յորք)	Բրիտիսմ (Լեհինգրադ)
Ծոփք									
Սամեսս, մ. թ. ա. մոտ 260 թ.	2	—	—	—	1	1	—	2	1
Արշամ I, մ. թ. ա. մոտ 240 թ.	—	1	1	1	—	—	—	4	—
Արշամ II, մ. թ. ա. մոտ 230 թ.	1	—	3	1	—	1	—	6	—
Քսերքսես, մ. թ. ա. մոտ 220 թ.	5	—	3	—	—	2	1	1	1
Արդիսարես, մ. թ. ա. մոտ 210 թ.	3	2	1	1	—	1	2	1	—
Զարեհ, մ. թ. ա. մոտ 190 թ.	—	—	1	—	—	—	1	—	—
Մորփիլիգ, մ. թ. ա. մոտ 150 թ.	—	—	—	—	—	—	1	—	—
Արտանես, մ. թ. ա. մոտ 110 թ.	—	—	—	—	—	—	—	—	—
Արշակ, մ. թ. ա. մոտ 90 թ.	—	—	—	—	—	—	1	—	—
Կոմմագենե									
Պտղոմայոս, մ. թ. ա. մոտ 163 թ.	—	—	—	—	—	-	—	-	—
Միհրդատ I Կալլինիկոս (96—70)	4	3	2	—	1	—	1	7	—
Անտիոքոս I Թեոս (60—34)	—	—	1	—	—	—	—	8	—

բերը հանդուցված են գլխաներում և ազատ արձակած իրել են թիկունքին։

Ուշագրավ է, որ Սամեսը պատկերված է առանց մորուքի և ընչացքի, արծվաքիթ, դեմքը դեպի աջ թեքած։ Այդ նույն դրամի հակառակ կողմի վրա դիտվում է Դիոնիսի պաշտամունքի նշանը երկու ամաթեղջյուրների միջև, ինչպես նաև հունարեն գրություն միապետի անվան ու տիտղոսների վերաբերյալ. ձախից՝ ΒΑΣΙΛΕΩΣ || ΣΑΜΟΥ աջից՝ ΘΕΟΣΕΒΟΥΣ || ΚΑΙΦΙΛΑΟΥ։ Հիշյալ պղնձե դրամի նմուշները տարբեր կշռային չափերով են՝ 4,15-ից մինչև 7,69 գրամ և ընդունված են որպես ատտիկյան համակարգի երկքաղկոններ։ Նույնանման մեդալաձև գլխարկով, սակայն առանց ականջակալի, միայն վզկալով և նույնպես անբեղ-անմորուս դեմքով (դեպի աջ), ոչ սրածայր, այլ լայնաուռուցիկ ուղիղ քթով, որ բնորոշ էր հունական դիմաքանդակներին, պատկերված է Ծոփքի հաջորդ գահակալը՝ Արսամեսը կամ ինչպես հայերենում է՝ Արշամ (I) թագավորը (մ. թ. ա. մոտ 240 թ.), կիսանդրու չափով։ Այս երկրորդ գահակալի օրոք թողարկված դրամների վերաբերյալ Զ. Պտուկյանի լուսաբանությունը հիմնված է մի կողմից պատկերների ձևավորման, մյուս կողմից՝ պատմագիտության նորահայտ տվյալների վրա։

Զ. Պտուկյանը գտնում է, որ Ծոփքում հավանաբար գոյություն են ունեցել Արշամ անունով երկու թագավորներ։ Դրանցից մեկը գահակալել է մ. թ. ա. մոտ. 240 թ., իսկ մյուսը՝ առաջինից տասը տարի անց։ Հեղինակը օրինաչափ է համարում, որ Արշամի անունով երկու թագաքներ են գոյություն ունեցել՝ Արսամուսատը (Արշաուշատը) և Արսամեան (Արշամեան)։ Ըստ պատկերների դրամները զատվում են միմյանցից և ամփոփվում երկու տարբեր խմբերի մեջ։

Առաջին խմբի (Արշամ I) դրամների վրա արքայական պատկերները հար ու նման են միմյանց և դրանց հակառակ կողմերին ներկայացված է արշավող ձիավորը (Նիգակազեն), որի գլխավերևում երկու տողով՝ ΒΑΣΙΛΕΩΣ || ΑΡΣΑΜΟΥ արձանագրությունն է պահպանված։ Դրամագետը բացահայտել է, որ հեծյալ ռազմիկի դիմաց, ներքև ձիու առջևի ոտքերի տակ՝ վայր ընկած տեսքով պատկերված է մեկ ուրիշ մարդկային կերպարանք։ Այդ կարգի դրամներից հիշատակվում են նաև մի քանի, դժբախտաբար մաշված, տարբերակներ։ Սակայն հիմնական օրինակը (№ 2)

տիպային առումով միանգամայն ներդաշնակ է իր ժամանակին թողարկված դրամների բնորոշությանը։ Նորություն պիտի համարել նաև հեղինակի բացահայտած Ծոփքի հայոց դրամների հաջորդ (երկրորդ) խումբը՝ վերագրված Արշամ II-ի գահակալության տարիներին (մ. թ. ա. մոտ 230 թ.)։ Դրանցից ներկայացված են տիպային չորս տարբերակներով, մեծ ու փոքր տրամագծային չափերի պղնձե դրամներ, որոնցից բոլորի առաջին կողի վրա տրված է միապետի պատկերը (կիսանդրին), դեմքով դեպի աջ։ Այդ պատկերը որոշակիորեն տարբերվում է նրան նախորդող գահակալի (Արշամ I) պատկերից նախ և առաջ իր արքայական գլխարկի ձևով։ Այս դեպքում արդեն չկա նախկին վեղարաձև, սատրապական ժամանակներին բնորոշ որածայր կատարով գլխարկը և դրա փոխարեն ներկայացված է մի գտակ, քոլողի ձևով, որի ճակատային մասի վրա ամրացված է արքայական պսակը, բավական լայնանիստ, քան անցյալներում այն նշվում էր։ Հելլենիստական դիմաքանդակներին բնորոշ այս Արշամի (II) դեմքը ևս ներկայացված է անմորուք և առանց ընչացքի, բայց առավել դիտելի են դարձված նրա վարսերը գլխատեսում։ Ըստ կերտվածքի արքայական դիմաքանդակների տարբերությունները, որպես տարբեր անհատականությունների պատկերներ, վերոհիշյալ Արշամներին վերագրված պղնձե դրամների վրա լրացնում են այդ նույն օրինակների հակառակ կողմերին դրոշմված սիմվոլների օգնությամբ։ Ձևավորման հելլենիստական դարաշրջանին բնորոշ տարրերը հարազատորեն ներդաշնակվում են Մերձավոր Արևելքի, մասնավորապես բուն Ծոփքի և Սիրիա-Կոմմագենյան ոլորտի պատկերաքանդակների հետ։ Արշավող հեծյալի պատկերը, ինչպես նաև նրա գլխավերևում նշված արքայի անվան երկտող հունարեն գրության ձևը, որ մինչ այդ ընդունված էր ծոփաց դրամների վրա, նույնպես նշում է կապը տեղական ավանդույթների հետ (պատկերներ №№ 2, 3, 5), թեև նոր խորհրդանշաններ են դրսևորված, որոնք բացակայում էին անցյալում։ Այսպես, օրինակ, ողջ հասակով, հանդիպահայաց կանգնած, մերկամարմին, առնական, գուրզը ձեռքին մարդկային կերպարանը, որ հայոց մեջ առասպելական Վահագն էր կարծվում կամ հունաց մեջ՝ Հերակլես, կենտրոնական դիրք էր գրավում դրամի վրա։ Կենտրոնական այդ պատկերը փոխվում էր մերթ արծիվ, մերթ՝ երկվորյակներ հակացողությունների հետ աղերս ունեցող նշաններով, որոնք առնչություններ ունեին սելևկյան պատկերագրության հետ։ Ծոփքը մ. թ. ա. III դարի վերջերին Սելևկյանների ազդեցության ոլորտի մեջ էր։ Նորություն էր նաև այն, որ արքայի անունը հիշատակվում էր կենտրոնական պատկերների կողքերին՝ ձախից և աջից։ Տիպային առումով հիշյալ երկու խմբի դրամները որոշակիորեն տարբեր են միմյանցից և հեղինակը միանգամայն իրավացի է գնահատելու դրանց որպես նույնանուն, բայց տարբեր գահակալների դրամներ՝ գտնելով դրանք իրարից Արշամ I (№№ 2—4) և Արշամ II (№№ 5—8) սահմանումներով։

Զ. Պտուկյանի երախտիքը կայանում է նաև նրանում, որ նա Արշամներին վերագրած դրամները գիտական շրջանառության մեջ է մտցրել առաջին անգամ։ Գտնել այդօրինակ վկայությունները բյուրավոր հին դրամների զանգվածում, քննել ու ըստ արժանվույն ներկայացնել դրանք գիտական հասարակայնությանը՝ մեծարժեք գործ է։

Ծոփքի հայկական դրամների հաջորդ խումբը կազմում են այն պղնձե դրամները, որոնք թողարկվել են Քսերքսեսի գահակալության տարիներին, այսինքն՝ մ. թ. ա. մոտ. 220 թ.։ Ի տարբերություն նախորդների, Քսերքսեսի դրամները դիցաբանական և արքայական պատկերների տվյալներով նորություններ չեն։ Դրանց անցյալներում դասված լինելով Ծոփքի թագավորության դրամների շարքը, նկարագրվել և հրատարակվել են Վիկտոր Լանգլուայի, Էռնեստ Բաբելոնի ու նրանց նախորդների կողմից[1]։ Սակայն Զ. Պտուկյանը, հաշվի առնելով ժամանակագրական քննությունների նոր տվյալները, դրանց թողարկումը վերագրել է մ. թ. ա. III դարին, մոտ 220 թ.՝ ելնելով Կ. Թումանովի հետազոտությունների արդյունքներից[2]։

Քսերքսեսի մորուքավոր դեմքը, նրա արքայական գլխարկի անզուգական ձևը (երկսայր ճեղքվածքով բացված կատարը) ճանաչելի են դառնում անմիջապես։ Այդ դրամների հակառակ կողմի վրա պատկերված է հաղթանակի թևավոր դիցուհու կամ ռազմի աստվածուհի Աթենասի կերպարանքը (նստած, երբեմն՝ կանգնած դիրքով), որ խորհրդանշում է միապետության պաշտամունքային պաղափարները։ Դրոշմված լինելով միապետի պաշտոնական դիմաքանդակի ուղիղ հակառակ կողմի կենտրոնում, ինչպես Արշամ II-ի օրոք էր, դրանք շարունակում էին ավանդաբար ուղեկցվել դահակալի անվան հու-

---

[1] E. Q. Visconti. Iconografia greca. Vol. II, Milan, 1824, p. 317—348, pl. XVI, № 1—8; V. Langlois. Numismatique de Armenie dans l'antiquite. Paris, 1859; E. Babelon. Les Rois de Syrie, d'Armenie et de Gommagene. Paris, 1890.

[2] C. Toumanoff. Studies in Christian Caucasian History. Washington, 1963.

նարն գրությամբ աջից ΒΑΣΙΛΕΩΣ. ձախից՝ ΞΕΡΞΟΥ. ըստ որում՝ ինչպես Արշամ II-ի ժամանակ՝ ուղղաձիգ վերևից ներքև իջնող տողով։ Այդ ձևը ևս իր հերթին նշում է անցյալ կանոնի պահպանումը նոր թողարկման դրամի, այսինքն՝ Արշամ II-ի անմիջական հաջորդի՝ Ծոփքի թագավոր Քսերքսեսի դրամի վրա։ Նույն տիպի արքայական պատկերներով, մորուքավոր դեմքով, կիսանդրու չափով (դեպի աջ) և նույն արքայական գլխարկի ձևով դրամի վրա ներկայացված է Քսերքսեսի հաջորդը՝ Արդիսսարեսը։ Վերջինիս գահակալությունը Ծոփքում, ըստ հեղինակի, սկսվել է մ. թ. ա. մոտ 210 թ.։ Արդիսսարեսի պատկերը նրա անհատականության առումով որոշակի տարբերվում է Քսերքսեսից։ Արդիսսարեսը ներկայացված է համեմատաբար կանոնավոր դիմագծերով, կարճամորուք և, որ կարևոր է, նրա դրամի հակառակ կողմի կենտրոնում պաշտամունքի գաղափարը արտահայտված է արծվի պատկերով։ Երկնքում բարձր ճախրելու ընդունակ այդ թռչնի կերպարանքը բնությանը կենարար ուժ տվող արևի երկրպագության խորհրդանշան էր։ Արծվի պատկերով դրամների թողարկումը կատարվում էր նաև Սելևկյանների կողմից, որոնց ենթակա էր Ծոփքի թագավորը մինչ Մագնեզիայի ճակատամարտը (մ. թ. ա. 189 թ.)։ Սելևկյանների պարտությունից հետո Ծոփքի Սորատեկոս Զարիադրեսը կամ ինչպես հայերին են ասում՝ Զարեհը, հաղթանակած հռոմեացիների կողմից ճանաչվել էր տեղի միապետ։ Հիշենք նաև, որ հենց այդ ժամանակ Մեծ Հայքում թագավոր էր հռչակվել Արտաշեսը։ Ստեղծվել էին միմյանցից անկախ երկու հայկական թագավորություններ՝ Ծոփքում Զարեհի գլխավորությամբ, իսկ Մեծ Հայքում՝ Արտաշեսի։ Վերջինիս հետնորդների՝ Արտաշեսյան գահակալների դրամակերները, բացառությամբ իրեն՝ միապետության հիմնադիր Արտաշեսի և նրա հաջորդի՝ Արտավազդ I-ի, պահպանվել են դրամների վրա։ Իրոք կարևոր վկայություն, դրախտավոր աշխատության մեջ ներկայացված է նաև պղնձե մի դրամ Զարեհ թագավորի պատկերով (№ 18)։ Դրամագետին հաջողվել է պարզել, որ Զարեհ անունով և պատկերով տվյալ դրամը թողարկվել է ոչ այլուր, քան Ծոփքում, որի ողջ տարածքը մ. թ. ա. II դարի սկզբին եղել է այդ միապետի հակողության ներքո։ Հենվելով Ստրաբոնի հիշատակության վրա, հեղինակը իրավացիորեն նշում է, որ սենսացիոնը թե՛ Ծոփքում և թե՛ Մեծ Հայքում խոսում էին բոլորի համար ընդհանուր՝ հայերեն լեզվով։ Ավելի ուշ, Մագնեզիայի ճակատամարտից շուրջ հարյուր տարի անց՝ Տիգրան Մեծի զորքերը նվաճել էին Ծոփքը և Կոմմագենեն, որոնք և մտել էին Արտաշեսյանների գլխավորած համահավասարական պետության կազմի մեջ։ Գրախոսվող աշխատությամբ բացառությամբ և Զարեհին վերագրված պղնձե դրամի վրա պատկերված է արքայի կիսանդրին վեղարաձև գլխարկով, առանց ականջակալի, միայն վզկալով, անբեղ և անմորուս, դեմքով դեպի աջ թեքված։ Միապետի ճակատին դիտվում են նրա գանգուր վարսերի փնջերը։ Այդ նույն դրամի հակառակ կողմի կենտրոնում պատկերված է դիգուռի (Անահիտը), հանդիպահայաց տեսքով, աջ ձեռքը վերև բարձրացրած, առքերի մոտ երկու սֆինքսներ՝ կռնակ-կռնակի դիրքով գետնին նստած, շուրջը հունարեն գրված է. աջից՝ ΑΝΙΣΑ || ΔΩ. ձախից՝ [ΔΣ]ΑΡΙ։ Այդ ողջ պատկերը վերցված է կետավոր շրջանակի մեջ։ Բրիտանական թանգարանում (քաշը 5,42 գ) և Բեռլինի թանգարանում մեկական օրինակներով պահվող այդ դրամի նմուշները մաշվածության և փոքր տրամագծային չափի (16 մմ) պատճառով դժբախտաբար զուրկ են իրենց նախնական վիճակի հստակությունից։

Ծոփքի դրամների շարքին է դասված նաև Մորփիլիս անունով արքայի պղնձե դրամը (մ. թ. ա. մոտ. 150 թ.), որի միակ նմուշը պահվում է Բեռլինի թանգարանում։ Ցավոք, դրամի պատկերը դուրս է մնացել աշխատության մեջ զետեղված պատկերների շարքից։ Այդ բացը մեզ զրկում է իրողություններ գնահատելու հնարավորությունից։ Ինչ վերաբերում է Ծոփքի վերջին գահակալներին՝ Արտանեսին (մ. թ. ա. մոտ 110 թ.) և Արշակին (մ. թ. ա. մոտ 90 թ.), ապա դրանց պատկանող դրամները մնում են անհայտ։ Համենայն դեպս առաջիկայում, եթե գտնվեն Ծոփաց աշխարհի դրամներից նոր օրինակներ, հրատարակվելու կարող է դառնալ այդ մասին։

Փարիզի ազգային մատենադարանի հին դրամների շարքում առկա է դարձյալ ... ΑΒΑΝΟΥ։ Ինչպես արձանագրությամբ պղնձե մի դրամ ևս, որը կարող էր լինել ΑΡΤΑΒΑΝΕΣ արքայի դրամը[3]։ Բացառված չէ նաև, որ Պետական էրմիտաժում պահվող ΒΑΣΙΛΕΩΣ || ΑΡΣΑΚΟΥ երկտող գրությամբ, Հայաստանին վերագրված դրամը թողարկված լինի Ծոփքում, ուր Արշակը կառավարիչ էր կարգված՝ արդեն Տիգրան Մեծի գահակալության տարիներին[4]։ Այդ և այլ հարցեր մնում են անորոշ՝ կախված Ծոփքի դրամների նոր հայտնություններից։

Քննելով Կոմմագենեի դրամները, որոնք թողարկվել են Ծոփքից անկախ լինելու ժամանակ-

---

[3] G. Le Rider. Monnaies grecques acquises par le Cabinet des Medailles en 1959. — RN. Paris, 1959—1960, № 28, p. 21.

[4] Պետական էրմիտաժ, դրամագիտության բաժին, անտիկ շրջանի դրամների շարք, № 19401։

ներում, հեղինակը ներկայացրել է նախ և առաջ Միհրդատ Կալլինիկոսի (96—70) պղնձե դրամները, որոնք ըստ կշռային չափերի ստորաբաժանված են երկու խմբի՝ համեմատաբար թեթև ու ծանր միավորների՝ քաղկոսների (3,35—4,54 գ) և երկքաղկոսների (5,30—8,47 գ)։ Միհրդատ Կալլինիմոսը պատկերված է վեղարաձև, սրածայր կատար ունեցող գլխարկով, որի ճակատին ամրացված է արքայական պսակը։ Վերջինիս ժապավենը հանգուցված է արքայի գլխաետևում, իսկ ժապավենի ծայրերը հերարձակ իջել են թիկունքին։ Դիցաբանական բնույթի պատկերները դրոշմված են դրամի կենտրոնական մասում (Աթենաս, թևավոր ձի, դափնեճյուղ և այլն)։ Այդ պատկերների կողքերին (ձախից և աջից) նշված են միապետի, տվյալ դեպքում՝ Միհրդատի անվան ու տիտղոսի հունարեն գրությունները։ Ուշագրավ է, որ արքայական գլխարկը իր ձևով հիշեցնում է աքեմենյան ժամանակներից մնացած սատրապական (փոխարքայական) գլխարկի ձևը, մինչդեռ մնացած (դիցական) պատկերները արտացոլում են առնչությունները հելլենիստական մշակույթի սելևկյան շրջանների հետ։ Կոմմագենեի դրամների պատկերատիպը նկատելիորեն փոխվում է ուշ հելլենիստական ժամանակներում։ Անտիոքոս I Թեոսի օրոք (60—34) միապետը դրամների վրա պատկերված է հայկական թագով, հար և նման Տիգրան II-ի պատկերին, մի ձևավորություն, որ ընդհանուր էր ողջ Հայաստանի համար։ Սակայն ներկայացված է նաև Անտիոքոս I Թեոսի անունով, բայց ոչ հայկական թագով մեկ ուրիշ պըղնձե դրամ։ Ուշագրավ է, որ հայկական Կոմմագենեի միապետի գլխին հայկական թագի բացակայությունը հիմք է տվել ենթադրելու, որ հռոմեական նվաճումները Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում. Պոմպեոսի արշավանքների ժամանակ, ինչպես նաև Արտաշեսյանների թուլացումը Տիգրան Մեծի գահակալության վերջին շրջանում, պայմանավորել էին նոր ձևերի դրսևորումները Մեծ Հայքի ու Կոմմագենեի դրամագործության մեջ։ Դրանք նշում են անցյալներում եղած ընդհանրությունների խզումը, որ կար Տիգրան Մեծի օրոք։ Այդ է արտացոլում Կոմմագենեի պղնձե դրամի պատկերատիպը՝ թողարկված Անտիոքոս I Թեոսի (60—34) անունով (№ 26)։

Ամփոփելով, կարող ենք ընդգծել, որ դրամագետ Զարեհ Պտուկյանի քննությամբ բացահայտվել են Ծոփքի ու Կոմմագենեի հայկական թագավորությունների դրամները՝ թողարկված ներքոհիշյալ գահակալների պատկերներով, նրանց անունների հունարեն գրություններով և պաշտամունքին վերաբերող նշաններով.

ՇՈՓՔ

Սամոս	մ. թ. ա. մոտ 260 թ.				պղնձե դրամներ
Արշամ I	»	» 240	»	»	»
Արշամ II	»	» 230	»	»	»
Բսերքսես	»	» 220	»	»	»
Արդիսսարես	»	» 210	»	»	»
Զարեհ	»	» 190	»	»	»
Մորփիլիկոս	»	» 150	»	»	»

ԿՈՄՄԱԳԵՆԵ

Միհրդատ Կալլինիկոս	մ. թ. ա. մոտ 163 թ.		պղնձե	դրամներ
Անտիոքոս I Թեոս	»	» 60—34 թ.	»	»

Բացառությամբ Ծոփքի Արտանես (մ. թ. ա. մոտ 110 թ.) և Արշակ (մ. թ. ա. մոտ 90—69 թթ.), ինչպես նաև Կոմմագենեի Պտղոմայոս (մ. թ. ա. մոտ 163 թ.) թագավորների դրամների, որոնց գոյությունը մնում է դեռևս անհայտ, բոլոր մնացյալ միապետների դրամները ներկայացված են հստակ դասավորությամբ։

Զ. Պտուկյանի այս նոր աշխատությունը դասելի է հին Հայաստանի, մասնավորապես Ծոփքի և Կոմմագենեի հելլենիստական շրջանի նյութական մշակույթի պատմությանը նվիրված մեծարժեք քննությունների շարքը։ Այն հնարավորություն է ընձեռում առաջիկայում ընդարձակելու հետազոտությունների ասպարեզը և, ի լրացումն կատարվածի, պարզելու Ծոփքի ու Կոմմագենեի գրամների պատկերագրության, ժամանակագրության, նրանց տարածման, կշռային համակարգի ու այլ հարցերի մասին ցարդ եղած անորոշությունները։

Պատմ. գիտ. դոկտոր Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ